Գ. ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 10 ՇԱԲԱԹ 1899 ԹԻՒ 118

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ֆրք. 10
Վեցամսեայ » 5
Արտասահման
Տարեկան Ֆրք. 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ




Գրութիւնք ետ չեն տրուիր։

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN
K. STEPAN
BULGARIE) VARNA

# ՇԱԲԱԹԱՀԱՆԴԷՍ· ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

*Եթէ կ'ուզէք «Հայելի»ին մէջ աղոր երեւնալ,*
*Պարտիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ։*

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ ԼՈՒՐԵՐ

### ԳՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

*Թէհրան, յունիս 12*

Յունիսի 2ից 'ի վեր, տեղիս Ռուսաց փոխատու բանկի ռուս գանձապետը աներեւութացած լինելով, նոյն բանկի տեսուչը ռուսաց դեսպանի ներկայութեամբ կոտրել է տալիս բանկի պահեստի դրամագլխի սնտուկը, որտեղից 310,000 ռուսական ռուբլի և 15,000 թիւմէն պարսկական թղթադրամ գողացուած տեսնելով, դեսպանն անձամբ դիմում է Շահին՝ պահանջելով որ Պարսից հողում կատարուած այսպիսի մի նշանաւոր գողութեան հեղինակները ձերբակալուեն։ Շահի բարձր հրամանով՝ ոստիկանութիւնը անմիջապէս ձեռնարկում է խուզարկութեան մի քանի տեղերում։ Գանձապահը, սակայն անյայտացած է լինում արդէն, և նրան ձերբակալելու բոլոր ջանքերը միանգամայն ի դերև են ելնում։ Բայց չարագործին մեղսակից և խորհրդատու կովկասցի կօշկակար Յովսէփ Յովհաննիսեանը և տեղիս Հայկազնեան դպրոցների ուսուցիչ Պ. և Տիկին Ջէյրանեանցները անմիջապէս ձերբակալուեցին ու բանտարկուեցին։ Նոյն իսկ տիկին Ջէյրանեանցի հագած շորերի ծալքերում գտել են ահագին քանակութեամբ հարիւրնոց ռուբլիներ։ Այդ ընտանիքի աղախինն էլ ունեցել է իր բաժին քանի հազար թիւմէնները։ Յովսէփ Յովհաննիսեանի տնից դուրս են բերել թղթադրամների մի մեծ ծրար, որը մօտաւորապէս պարունակելիս է եղել 30,000 ռուբլի։ Յովսէփը, ձերբակալուելուց յետոյ իր պատիւն անաղարտ պահելու համար (?), բանտի մէջ իր փորը պատռում է և մի քանի ուրիշ վտանգաւոր վէրքեր տալիս իրեն, որից յետոյ նա փոխադրւում է կառավարական հիւանդանոցը։ Գողութիւնը յայտնուելու երրորդ օրն իսկ՝ մի պարսիկ դեղագործ ոստիկանութեանը ներկայացնում է թղթադրամների մի մեծ կապոց՝ յայտնելով թէ քանի օր առաջ Ջէյրանեանցն այդ ծրարը իրեն պահ էր տուել ասելով, որ լուցկիի կապոց է, և այլն։ Այս հանգամանքն առիթ է տալիս նոյն այդ դեղագործի վրայ ևս կասկածելու. կարծւում է, որ նրան ևս պիտի ձերբակալեն։

Ռուս գանձապահը վերջին ամիսները մօտ յարաբերութեան մէջ գտնուելով տիկին Ջէյրանեանցի հետ, վերջինս իր թովիչ լեզուով համոզում է գանձապահին, որ բանկի դրամներից մի նշանաւոր գումար առնելով Ջէյրանեանց ընտանիքի հետ փախչէ Եւրոպա։

Գանձապահը համաձայնւում է իր սիրուհու խօսքերին, բանկի պահեստի դրամից գողանում է մօտաւորապէս 300 հազար թիւմէնի մի գումար (թղթադրամ) եւ տանում Ջէյրանեանցների մօտ։ Վերջիններս, նկատելով

Գրութիւնք ետ չեն տրուիր։

լով որ այդպիսի մի նշանաւոր գումարի անյայտանալը կարող է շուտով երևան գալ և իրենց կորստեան պատճառ դառնալ, իրենց օգնական և գաղտնակից են վերցնում Կովկասցի Յովսէփ Յովհաննիսեանին և գանձապահին համոզելով, որ նա պիտի Թէհրանից հեռանայ, նոյն գիշերը պատրաստում են հըրաժեշտի մի խնճոյք, ուր լինում են տիկին և Պ. Ջէյրանեանցները, կոշկակար Յովսէփը իր կոնջը հետ, և ապա ուրիշ երկու պարսիկ կանայք։ Մի լաւ խմելուց և ուտելուց յետոյ այդ խումբը վայրենաբար յարձակւում է անօգնական գանձապահի վրայ և նրան կախելով խեղդում։ Ապա ամբողջ մարմինը նոյն թոկով գունտ ու կծիկ անելով, ճամբորդուԹեան շորերով իսկ Թաղում են բակի մի յարմար անկիւնում, ուր նոյն իսկ երկրորդ օրը, դերեզմանի վրայ մի խոհանոց են շինել տալիս։ Բայց ի վերջոյ ոստիկանապետը խոստովանեցնել է տալիս կատարուած եղեռնագործուԹիւնը, որոց յետոյ սկսւում է մի շարք տեղի և անտեղի ձերբակալուԹիւններ, գլխաւորապէս Հայերի մէջ։

Ջէյրանեանցը եւ իր կինը Ռուսաց դեսպանատունը բանտարկուած են, իսկ Յովսէփը բանտում իր փորը պատռելուց յետոյ դեռ հիւանդանոցում տանջւում է։ Վերջերս էլ լուր կար Թէ մեռել է։

Կորած դրամները գտնուած են գրեԹէ ամբողջապէս. միայն 40,000 Թիւմէն է պակասում։

Պարսկահայերի անցկացրած գրեԹէ հինգ վեց դար կեանքում, այս առաջին անգամն է որ այս տեսակ մի երևոյԹ պատահեց, այն էլ իր Կովկասցի արենակիցների ձեռքով, որոնք, դժբաղդաբար, հայ ուսուցիչ և ուսուցչուհի անունն էին կրում և որոնց յանձնուել էր Թէհրանի մատաղ սերնդի դաստիարակուԹեան եւ կրթուԹեան ղեկը։ Արեւելք

# ԱԶԳԱՅԻՆ

## ՊՈՒՐԿԱԶԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՈՐԾԵՐՈՒ ՎԻՃԱԿԸ

Յունիս 26ին հրատարակուած «Իրաւունքի» մէջ ոյց ծանուցուած էր որ Պուրկազի մէջ օրինաւոր ընտրուԹիւն կատարուելով, եօԹը կարող ազգայինք Թաղական ընտրուած են. ասոր վրայ մենք ալ շատերուն պէս կարծեցինք Թէ խաղաղուԹիւնը վերահաստատուած ու միտքերը հանդարտած ըլլալով, հոն ազգային գործերը այլ եւս բարւոք ճամբու մէջ պիտի մտնեն. բայց աւաղ, այսօր նոյն քաղաքէն առնուած նորագոյն տեղեկուԹիւններ մեր յոյսերը ի դերև կը հանեն. Առնեմ Զտամ և իւր մէկ քանի համախոհք (*) ուխտած են սանձարձակ գործելու ու եկեղեցին և վարժարանը իրենց քմահաճոյքին խաղալիկ ընելու։ Առանք նկատելով որ նորընտիր Թաղականաց օրով չպիտի կրնան իրենց մաքիաւելեանները դարձնել, այս իրարեի Առնեմ Զտամի, տեղացիի ու գաղԹականի խնդիր մը հանելով, 20ի չափ ոչխարամիտներու գլուխն անցած ժողովակ կը կազմեն, յայտարարուԹիւն մը փակցունելով Թաղականաց ընտրուԹիւնը չեղեալ կը հրատարակեն և իրենց արարքը անգիտակցաբար քաջալերողներէն 7 անձինքը (որոնց մէկ երկուքը Պուրկազէն քանի մը ժամ հեռու գիւղերու մէջ կը բնակին ու մէկ երկուքն ալ ամենևին գիր կարդալ ու բան չի գիտցող տեսակէն կոշկակարի խալՓաներ են եղեր) առժամեայ Թաղ. խորհուրդ կընտրեն, սպառնալով որ, «ով որ այս եօԹը անձանց ԹայականուԹիւնը դէմ լողոքէ, իբր խռովարար կառավարուԹեան պիտի յանձնուի» աքսորուելու համար։

Ահա այս է Պուրկազի ազգային գործերու այսօրուան ողբալի վիճակը։

ԴաշնակցուԹեան վիժած այդ շարլաթան արարածին, Առնեմ Զտամի պաշտպանները ալ պէտք է գիտնան որ, վաղը պիտի զղջան իրենց պաշտպանուԹիւններուն համար, բայց գործը գործէն անցած պիտի ըլլայ։ Գ.

(*) Կըսեն Թէ, ընճեան անուն ազգայինը, որ տարիներէ ի վեր տեղւոյն Թաղ. խորհուրդոյ մէջէն դուրս չելներ և խորհրդոյ կնիքը չուզեր յանձնել, իբր Թէ անոր մոգաբան առած ըլլար, Առնեմ Զտամի պաշտպաններու պարագլուխն է։ Կարծենք տեղն է յիշել Թէ՝ «ոչ մանն զնմանն սիրէ»։

## ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐ

### Ռուսական նոր որոշում

Այս առտուան Կովկասեան թղթաբերը կարևոր լուր մը կը բերէ. Ռուսաց Սինոդը որոշեր է լիազօր իշխանութիւն տալ այն Ռուս առաջնորդներուն, որոնց թեմերուն մէջ օտարացեղ ժողովուրդներ կ'ապրին, բանալու կարելի եղածին չափ շատ եկեղեցական-դպրական-ուսումնարաններ։ Միանգամայն հրահանգ տրուած է ռուս հոգևորականութեան, որ օտարացեղ ժողովուրդները քաջալերէ իրենց զաւակները այդ ուսումնարանները ղրկելու։ Այդ տղոցմէ անոնք որոնք մտաւոր և բարոյական յատկութիւններով աչքի կը զարնեն, պէտք է այնուհետև ուսում ստանան ռուս հոգևոր դպրոցներուն մէջ և իրենց ուսումը ստանալէն ետքը պարտաւոր ըլլան ծառայել իրենց պատկանած հասարակութեան մէջ։ Այս կարգի աշակերտները թոշակ պիտի ըստանան Ռուսիոյ հոգևոր վարչութենէն։

Անհաւասիկ նոր միջոց մըն ալ ղոր ձեռք կ'առնէ ռուսական վարչութիւնը՝ իր հոգևորականութեան միջոցաւ՝ ռուսացնել ձգտելով երկրին օշ-ռուսադաւան ազգերը։

— «Վանայի Հիւրմիւզեան Տ. Գէորգ քահանան գրած էր թէ չի կրնալով Պոլիս գալ, տեղական քննութիւն կը պահանջէ, առարկելով որ Կրօն. ժողովը ձրի ամբաստանողներու խօսքով որոշում տուած է։ Բայց Կրօն. ժողովը նկատելով որ այդ քահանային դրաւոր տեղեկութեանցը վրայ հիմնուելով յանցաւոր դատած էր զայն, եւ թէ Տ. Գէորգ քհնց փախուստ կուտայ Պոլիս գալէ, համոզում գոյացուց թէ յիշեալը աւելի կը հաստատէ իր յանցանքը»։

— Ի Նպաստ Հայաստանի սովելոց, Սոֆիաէն 1100 ֆրանք ղրկուած է Պատրիարքարան։

— Իզմիրեանցի այս տարուան մրցանակը. Ա. 30 ոսկի՝ Տ. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանին՝ իր «Աղուանից երկիր եւ Դրացիք, ես Արցախ», երկհատոր գործին համար։ Բ. 20 ոսկի՝ Վիէննայի Մխիթարեաններէն Հ. Յակոբոս վարդապետ Քոսեանի՝ իր «Հայք ի Զմիւռնիա և իշրջակայս» երկհատոր տպագիր գործին համար։ Գ. 15 ոսկի Յարութիւն էֆ. Գ. Մրմրեանի։ «Հին օրեր եւ այդ օրերուն մարդը Յովհաննէս Պրուսացի Տէրոյէնց» կենսագրական ձեռագիր աշխատութեան համար։

## ԶՐԿՈՒԱԾՆԵՐ

Տկարը ղրկուած է իրաւունքէ՝ պաշտպան մը չունենալուն պատճառաւ։

Հայ ազգը ղրկուած է հաւասարական ուժէ՝ իրար չի հակցող կուսակցութիւններուն պատճառաւ։

Գօմիտէները ղրկուած են ժողովուրդի օժանդակութենէ՝ իրենցմէ եղած խաչագողներու գործունէութեանը պատճառաւ։

Թուրքիա ղրկուած է խաղաղութենէ՝ տիպլօմաթիայի անվերջանալի հաշիւներու պատճառաւ։

Խանութպանները ղրկուած են առուտուր ընելէ՝ ժողովուրդին քով կոտ չի գտնուելուն պատճառաւ։

Վառնայի աղքատ հիւանդները ղրկուած են դեղէ ու սնունդէ՝ Աղքատախնամ չդոյութեան պատճառաւ։

Պուրկազը ղրկուած է հանդարտութենէ՝ Առնեմ Զատմի դարձուցած մանօվրաներուն պատճառաւ։

Վառնայի երիտասարդութիւնը ղրկուած է Ընթերցարանէ ու Լսարանէ՝ ատտարոյներ չունենալուն պատճառաւ։

Ռուսճուգ ղրկուած է համերաշխութենէ՝ Տնօրէնին խառնելներուն պատճառաւ։

Տիզոյն վարժարանն ալ ղրկուած է յառաջդիմութենէ՝ հով-գլուխ ուսուցիչներու պաշտօնավարութեանը պատճառաւ։

Կարգ մը երիտասարդներ ղրկուած են անառակութենէ՝ ծակ-դրպան ըլլալնուն պատճառաւ։

Օրիորդները ղրկուած են սրտի հանդարտութենէ՝ մօտաի տենչանքէն հալումաշ ըլլալնուն պատճառաւ։

Խմբագիրներուն պիտճէները ղրկուած են հաւատարակշռութենէ՝ բաժնեգիրները կանոնաւոր կերպով չի դանձուելնուն պատճառաւ։

Վերջապէս մարդկութեան մեծ մասը ղրկուած է բնութեան շնորհներէն, հանրութիւնը առաջնորդներուն քմահաճոյքը պատճառաւ։ ԶԻԿ—ԶԱԿ

# ԳԻՏԱԿԱՆ

*Գիրք մը որ . . . կը խօսի, կ'երգէ ու կը մայէ։*

Այս անգամ կ'ուզեմ «Հայելիի» ընթերցողներուն ծանօթացնել մեքենական օրէնքի մը պարզ ու ճարտար մէկ կիրառութիւնը, որով Բարիզցի հնարամիտ ձեռնարկու մը յաջողած է սիրուն, զբօսալի ու միանգամայն խիստ օգտակար նուէր մը պատրաստել պզտիկներուն համար։

Այս նուէրը պատկերազարդ գիրք մըն է, բայց չնմանիր անոնց որոնք ցարդ հաղարներով հրատարակուեցան։ Ասիկայ իր խօսուն պատկերներովը ճշմարիտ սիրբոիզ մը պիտի պատճառէ պզտիկներուն ու նոյն իսկ մեծերուն ալ։

Պատկերները կը ներկայացնեն ամենէն ծանօթ ընտանի անասունները որոնք իրենց յատուկ լեզուն կը խօսին։ Այս տեսարանը առաջ բերելու համար գրքին կողքին վրայ գտնուած լարը քաշել կը բաւէ։ Ամենասիկ աքաղաղ մը, էշ մը, կով մը, ոչխար մը, պզտիկ թռչուններ իրենց բոյնին մէջ և մանրտրտիկ տղաքներ։

Եթէ լարը իւրաքանչիւր էջին քաշենք, ամէն մէկ կենդանիի յատկանշանական ձայնը պիտի լսենք։ Աքաղաղը կ'երգէ եւ իր ձայնը շատ նմանութիւն ունի իսկականին։ Էշը կը գոռայ, ոչխարը կը մայէ, պզտիկ թռչունները կը ճռուողեն, կովը կը բառաչէ ու պզտիկ տղաքը հայրիկ, մայրիկ, կը պոռան։

Այս տարբեր արդիւնքները խիստ պարզութեամբ ձեռք կը բերուին մանր փուքերու միջոցաւ, որոնք գրքին թանձրութեանը մէջ ծածկուած են։ Փուքը քաշուած ատեն, օդը կը թափանցէ, կը մտնէ անոր մէջ եւ յետոյ ետ կը մղուի զսպանակէ մը որ փուքին կուտայ իր նախկին դիրքը։ Օդը, երկաթեայ թելի մը վրայ գտնուած կեռիքներէն (cran) անցնելէ յետոյ, իւրաքանչիւր ձայնին համեմատուած մասնաւոր խողովակէ մը դուրս կ'ելլէ։

Հեղինակը շատ լաւ ուսումնասիրած ըլլալով կեռիքներու յօրինման խնդիրը, արդիւնքները խիստ գոհացուցիչ են։ Այսպէս աքաղաղին կուկուլիկուն առաջ բերելու համար երկաթէ թելին վրայ երկու կեռիքներ կան, մին միւսին եաեւէն եւ երրորդ մը՝ քիչ մը աւելի հեռուն։ Փուքը կանգ կ'առնէ այս կեռիքներուն վրայ, եւ օդը դուրս ելած ատեն կուկուլիկի ձայնը կը հնչէ։ Ոչխարին մայիլն ձեռք բերուած է երկաթեայ թելը թեռուն թելով մը։ Կովին բառաչումը նմանցնելու համար, օդը դուրս կելլէ երկու խողովակներէ որոնք այդ խռպոտ ձայնը կարտադրեն։

Մէկ խօսքով, այս պատկերազարդ խօսուն գիրքը թէ՝ նոր է և թէ տղաքներուն հաճելի ու օգտակար ժամանց մը հայթայթելու յատկութիւնն ունի։

Մնաց որ մեծերն ալ կրնան ոչ նուազ հաճոյքով թղթատել այս նորատիպ գիրքը և տեսնել թէ ինչպէս կարելի է, պարզ ու ճարտարահնար յօրինումով մը, թղթին վրայ փռուած կենդանիները խօսեցնել տալու յաջողիլ։

Ս. Ռ.

# ՕՂԻԻՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

*Մինչ ցուրկ մնջիկ օդին ի տարառ,*
*Անարգ հաճոյքի պատրաստեր պաշար·*
*Անպատում բերկրեր հոգւով կաթոգին,*
*Կը խոստովաներ ինքն իրեն անձին.*
*«Ինչ որ ուզեցի, ինչ որ ըսի ես՝*
*Օ՛խ, եղաւ այնպէս»։*
*«Ուզեցի ըլլալ ես միշտ ազդեցիկ,*
*Իբրեւ մի մեծ անձ ու յնաշխարհիկ·*
*Իշխել կամեցայ փոքրին ու մեծին,*

Հարուստ, մեծատան, տնանկ աղքատին.
Զի անոնց մէջ միշտ ժուռ գամ պարզերես,
Օ՛խ, եղաւ այնպէս։

«Ասի թէ շատեր ինձ գերի ըլլան,
Ես անոնց կեանքին ու մահուան իշխան.
Հանոյքիս համար տամ շատին հրաման
Ընպանելով զիրար մահուամբ զանազան.
Եւ կամ իրարու տալ հարուած սպէս սպէս,
Օ՛խ, եղաւ այնպէս։

«Ասի որ դրնեն ծունկը իմ առջեւ
Սրտով ու հոգով միշտ բարին գիտեւ,
Որպէս զի անոնց ցանեմ մահաղեղ,
Եւ յաւիտենական հանոյք սիրագեղ.
Անոնց ընտանիք հիւծին դառնապէս,
Օ՛խ, եղաւ այնպէս։

«Ցանցաւոր, դահիճ, գող ու մարդասպան
Ամենքն ալ գերի ու ծառայ ըլլան.
Որոնք շատերուն ազդեն սարսափ միշտ
Ու հանոյք առբեն անիսիղմ արտիս միշտ.
Ուզեցի այսպէս. ջանացի այսպէս,
Օ՛խ, եղաւ այնպէս։

«Խոստովանիմ թէ կեանքը չէ իմ պարգեւ,
Այլ երբ ուզեմ զայն կառնեմ արդարեւ.
Ծառայքս տուժեն, ես կամ ապահով,
Զոհերուս վրայ միշտ ծիծաղելով.
Ով երջանկութեանս, յուսացի այսպէս,
Օ՛խ, եղաւ այնպէս։

«Մարդը խրոխտայ թէ է մեծ էակ,
Մինչդեռ ինձմով է ստրուկ եւ անարգ.
Թէ ունենայի հանճար ու հոգի,
Ուզեր կրնեի, ինչե՞ր գործեի.
Այսպէս հանապազ կամիմ պարզերես,
Վա՜խ, չըլլար այնպէս։

Ա.

# Ի՞ՆՉ Է ՍԷՐԸ

Սէրը՝ փոխադարձ եղած ատեն՝ երջանկութիւն է։

Մէկ կողմէն եղած ատեն՝ կատարեալ թշուառութիւն է։

Սէրը կրակէ շապիկ է։

Սէրը մաշողական ախտ է։

Սէրը ֆոսֆոռ է։

Սէրը աղուորիկ, կլորիկ, փամփուշիկ աղջիկ մըն է. աղուորիկ աղջիկ մըն ալ սէր է։

Սէրը Աստուածային պատուիրանքն է։

Սէրը ծաղկահասակ երիտասարդ ալ է։

Սէրը առանձին եղած ատեն գերեզմանին հրաւիրակն է։

Սէրը գրագէտ չէ, բայց բանաստեղծ է։

Սէրը շատ անգամ կռիւին կարապետն է։

Սէրը եէչով խայտնախ է. էով ալ շատ անգամ երեսաբար է։

Գ. Մ.

## Նոր տեսակ ամուսնութիւն

Արդէն լսած էինք երկանիւով ամուսնութիւն, և երկանիւի վրայ ամուսնութիւն, բայց գոնէ դեռ իմացած չէինք որ երկու օրիորդներ սրընթացութեան մրցումի մը պիտի կատարէին մրցանակ—ամուսինը վաստկելու համար։ Ամերիկայի մէջ այս ալ եղեր է։ Երիտասարդի մը սրտին ու ձեռքին հաւասար սիրով կը փափագէին երկու օրիորդներ Որոշուեցաւ որ շուտ վազողը շահի . . . մրցանակը։ Երկու մղոն տեղ պիտի վազէին։ Շահողն եղաւ Օր. Նէլլի Տօնէլլի որ չորս վայրկեանէն հասաւ նպատակին։ Երիտասարդը կեցած էր նպատակակետ սիւնին քով, եկեղեցականի մը հետ, և իսկոյն ամուսնութիւնը կատարուեցաւ, առանց սպասելու որ միւս օրիորդը . . . դայ, գոնէ ներկայ ղտնուի։

# ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Աղքատ Ղազարոսին սերունդէն մէկը հարուստ և նեղսիրտ աղջկան մը հետ ամուսնացաւ։ Իր կնկանը խիստ ու բարկացոտ բնաւորութիւնը ամենքն ալ գիտէին. ուստի ամուսնութենէն վերջը բարեկամներէն մին հարցուց թէ՝ ի՞նչպէս կապրի այդ կնոջ հետ։

— Ա՜հ, պատասխանեց նոր փեսան, երբ զիս բարկացնէ և ըրածը շատ ըլլայ, անմիջապէս սենեակս կը քաշուիմ ու... բերած ոսկիները կը համրեմ։

—

— Վա՜յ, բարի է.ք եկեր հաճի աղա, աս ի՞նչպէս եղաւ որ Վառնա եկաք։

— Ի՞նչ ընէի եղբայր, բժիշկը մեր բինին համար ծով մտնալ պատուիրեց, ես ալ հարկադրուեցայ գործս ձգել ու Ռուսճուքէն հոս գալ։

— Գոնէ օգուտ կը տեսնա՞ կոր։

— Նէ՞ մինասիպէթ, մինչև հիմա օգուտ մը չի տեսնալուն համար սիրտս կը նեղանայ կոր.

— Հոգ չէ, քանի որ բժիշկը պատուիրեր է, ծով մտնալը շարունակելու է, դուն ալ ծով կը մտնաս կոր.

— Շիտակը կուզե՞ս, ես հիմակու հիմա մինչև ճիաս պարտքի տակ կը մընամ կոր, ան գիտեմ։

—

Օրիորդ Շուշանիկ, իմացայ որ նշանդ ետ ընել տուեր ես.

— Ինչ ընեմ, քոյրս, ստակ ուզելուն ա՛լ չդիմացայ. աս ամէն շաբթու երկու ֆրանք տո՛ւր, երեք ֆրանք տո՛ւր, վերջը չեկաւ. ասոր մարդ կը դիմանա՞յ.

— Երկու երեք ֆրանքով բերանը կը դոցես կոր նէ ալ ի՞նչ կուզես. ես իմինիս մինչև հիմա 20—30 ոսկի տուի, տահա չի կրցի բերանը դոցել։

Մայր եւ որդի,

— Մա՛յրիկ, երէկ գիշեր ժօրաքոյրս տեսայ.

— Ո՞ւր տեղ տղաս, դուն մօրաքոյր չունիս.

— Ո՞վ ըսաւ, հաճի Բանաքօն պըտրտած ատեննիս հայրիկս շիշման աղուոր կնիկի մը հետ թոխտա ընելով ականջին բան մը ըսաւ, հէմ իմին ալ երեսս պագաւ ան կնիկը. ճամբան հայրիկս հարցուցի նէ՝ թեյզեդ է տղաս, ըսաւ։ Դուզում մայրիկ, ինչո՞ւ կարմրեցար.

— Հայրիկդ աս իրիկուն դայ նէ կը հասկնաս։

Դժբաղդաբար հայրիկը ան իրիկունը չէ եկեր։

# ԿԷԼ ԳԱՆԹԱՐԱ...

(Շարունակութիւն)

Ֆիլիպէ

Երբ Ֆիլիպէի կայարանը հասայ, Վառնայի ճանչուոր մէկ երկու բարեկամներու հանդիպեցայ, որոնք առևտրական գործերու պատճառաւ քանի մը օրէ ի վեր հոս եկած են եղեր. ահա անոնք զիս առաջնորդեցին Ճումաայի հրապարակը, ուր Պետրոս-Վարդանի Թահմիսին դիմացը խանթարը տեղաւորեցի. մէկ քանիներ ինծի ըսին թէ այդ խանութը հաւատաքնութեան ատեանի պէս բան մըն է, ուր երբեմն յառաջդիմական կոչուած քաջամարտիկներու խումբը հաւաքուելով, ուզածնուն պէս կը կարեն կը նետեն եղեր... խելքերնուն պճեղները։ Ինչ որ է, մենք հիմա մեր գործին նայինք։ Հոս Ա. անգամ «կէլ գանթարա» պոռալու պէտքը չունեցայ, որովհետև գանթարը կախեցուս պէս, միջահասակ, մօրուսաւոր ու նիհար պարոն մը եկաւ գանթարին վրայ նստաւ, ըսելով.

— Պ. Բոժոժիկ, գիտնալով որ մեզ ալ կշռելու համար հոս եկած էք, ահա առաջին անգամ ես կուզեմ սիքեան ընել. հապո՞ն, կշռեցէք նայինք.

— Այդչափ մի՛ աճապարէք, նախ իմացուցէք ինձ թէ դուք ո՞վ էք.

— Ա՛հ, իրաւունքդ ունիք Պ. Բոժոժիկ, ներեցէք, ամեն բանի մէջ նետուելու, խառնուելու ունեցած բնաւորութենէս մոռցայ ինքզինքս ձեզ ներկայացնել։ Ես՝ Փիլիպէի ծանօթ աժանս հապասն եմ, և ինչպէս որ կը տեսնէք, նիհարակազմ ըլլալով, այնչափ ծանր չպիտի կշռեմ։

— Ատիկա գանթարը գիտէ.

— Թէև վաճառատան մը մէջ գրագրի պաշտօնը ունիմ, բայց ոտքով գլխով ազգային գործերու մէջ կը մտնեմ, կը խառնեմ ու կը խառնուիմ.

— Անուննի՞դ.

— Ա. Տէմիրօֆ, ըստ բաւականին երաժշտութենէ ալ տեղեակ եմ։

— Գիտեմ, լացի գիշեր ողբ կարդացած տենդ Արստոլին կապէլան մանի կանչողի պէս ձեռքդ երեսիդ, ճիտիկդ ալ ծռած՝ խեղճուկ խեղճուկ կը կանչես։ Կարծեմ թէ 5_6 տարիէ ի վեր Պոլսկարահայ բառարան մը ալ շինելու ջանքեր կընես.

— Ա՛խ պարոն Բոժոժիկ, բառարանս իր տեսակին մէջ մէկ հատիկ պիտի ըլլայ, անզուգական, հիանալի՛.

— Աղէկ ա՛, փոխանակ ամեն գործի մէջ խառնուելու, սանկ հանդարտ նստիս ժամ մը առաջ այդ բառարանդ լմնցնես նէ չըլլա՞ր.

— Ո՛հ, ատիկա չեմ կրնար ընել Պ. Բոժոժիկ, որովհետև ձեռքս չէ.

— Անանկ է նէ մի՛ երերար որ խանթարը ձիշդ քիլոդ ցուցնէ.

— Չեմ երերար, կշռէ՛.

— Սա ոտքիդ մէկն ալ վեր առ որ գետինը չի քսուի. (կշռելով) եօթանասունը ութը՛ . .

— Հէ՞. ի՞նչ կըսես, Պ. Բոժոժիկ, կարելի՞ բան է.

— Ինչո՞ւ կը զարմանաս, մինակ խառնելու ու խառնուելու ծանրութիւնդ 55 քիլո, 12 քիլո ալ ծոցդ, գրպանդ, վերջապէս չորս կողմդ լեցուցած լրագիրներու ու թուղթերուդ տառն սեպէ, մնացածն ալ դուն ես, ալ ի՞նչ կուզես։ Հայտէ ճնոցը տո՛ւր ու աճապարէ երթալ խառնուելով խառնելու։

— Մնաք բարեաւ.

— Տէր ընդ ձեզ։

— Ծո՛ տղաք, ճամբան մի՛ գոցէք որ օրիորդը անցնի.

— Հրամմեցէ՛ք օրիորդ.

— Տիար Բոժոժիկ, ես աղջկանց վարժարանի ուսուցչուհիներէն եմ.

— Շատ աղէկ։

— Ամեն ուրբաթ կրնամ պարծիլ թէ խոշի մտօք կը կատարեմ ինձ յանձնուած պաշտօնը։

— Ամեն դպրոցական պաշտօնեայի բերանին համրիչն է այդ խօսքերը։

— Կուսակցական կռիւները իմ դասերուս նիւթ ընտրած եմ.

— Պռավո՛, որպէս զի ուսանողուհիք հիմակուց սորվին իրարու գլուխ պատռել, այնպէս չէ՞. ափէրին օրիորդ, ատանկ ընելու է։

— Սկզբունքներուս հաւատարիմ եմ.

— Գիտեմ, գիտեմ, բարեկենդանի ատեն դպրոցը ութը տասը օր գոց պահելու համար հոգաբարձութեան հետ կը կռուիս. ճիամսիշներէ չի զրկուելու ունեցած սկզբունքիդ միշտ հաւատարիմ ես։

— Եւ պարծենալով կըսեմ թէ՝ վարժարանը ինծի պէս ուսուցչուհի մ'ալ չի կրնար գտնել։

— Հարկաւ չի կրնար գտնել և փափաքելի է որ չի գտնէ։ Հիմա նստեցէք որ կշռուիք։

— Շատ աղէկ. (կը նստի)

— Տառնը չո՞ւրս կաւ. . .

— Ի՞նչ կըսէք պարոն Բոժոժիկ, քսանան ձգուելիք նամա՞կ կը կշռէք.

— Ո՛հ, օրիորդ, քսանան ձգուելիք կամ ձգուած շատ մը նամակներ թէև երբեմն 10_14 կոտ կը կշռեն, բայց բովանդակութեամբ հազարաւոր քիլօներու ծանրութիւնը կունենան. երանի թէ դուք ալ անոնց պէս ծանր կշռէիք։

— Ուրեմն մնաք բարեաւ, առէ՛ք ձեր դրամը։

— Շնորհակալ ենք օրիորդ, երթաք բարեաւ։

— Ողջոյն ձեզ.

— Վա՜յ, օրհնեցէք տէր Հայր, հրամմեցէք։

— Հոս հաւաքուեր ի՞նչ կընէք։

— Ցայտնի է եա՛, մարդ կը կշռենք կոր։

— Ես ալ կարծեցի թէ Մէթաքսա Ֆանեաֆին ունեցած առաւելութիւնները կը ջատագովէք։ Մնաք խաղաղութեամբ։

— Ներեցէք Տ. Հայր, ո՞ւր կերթաք։

(Շարունակելի)

## Մ. Զ.
# ԹՈԹՈՎՄՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեան սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 սանտիմ, Ա Զարպհանէլեանի գրատունը, Վառնա։

---

ԸՆԴԱՐՁԱԿ

## ՈՐ ԲՆԱՐ ՀԱՑԿԱԿԱՆ

կամ Հաւաքածոյ

Հին եւ Նոր Ազգ. երգերու

208 էջերէ բաղկացած սոյն երգարանը կը ծախուի Վառնա Ա. Զարպհանէլեանի գրատունը։ Գինն է 2 ֆր. թղթատարի ծախքը գըրատան վրայ ըլալով։ Դրամի փոխարէն կ'ընդունուի Պուլկարական Գաղ. Գերմ. Անգղ. և Թրքական չի գործածուած նամակադրոշմներ։ 5

---

## ԵՐԿԱՐԱՐԸ

կամ

ՄԵՂՔ և ԱՊԱՇԽԱՐ

Պոլսական կեանքէ քաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափազեան

Գին 60 սանթիմ։ Դիմել խմբագրութեան։

---

ԳՈՒՇԱԿ

## ԱՊԱԳԱՅԻ

կամ Զուարճալի Բաղդացոյց Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել խմբագրութեան։

---

## ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՍՕՖԻԱ ԲԱՂԱՔԻ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Երաշխաւորեալ

## Ա. ՊԱՐԳԵՒՆ Է 500,000 ՖՐ. ՄՕԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոցն 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1899 | Յունիս | 9ին | 1500 | Թիւեր. |
| „ | Յուլիս | 7 | 1500 | „ |
| „ | Օգոստ. | 4_5 | 2000 | „ |
| „ | Սեպտ. | 3_4 | „ | „ |
| „ | „ | 23_24 | „ | „ |
| „ | Հոկտ. | 13_3Նոյ | 16,000 | „ |

ԳԻՆԵՐՆ ԵՆ ՄՕԿԻ ՖՐ.

| Ամբողջ | | 5 Ֆ. | Քառորդ | Մէկ ութերորդ. |
|---|---|---|---|---|
| Ա. Ամիս | 10 Ֆ. | 2, 50 Ֆ. | | 1, 25 Ֆ. |
| Բ. „ | 16 | 4 | | 2 |
| Գ. „ | 20 | 5 | | 2, 50 |
| Դ. „ | 28 | 7 | | 3, 50 |
| Ե. „ | 24 | 6 | | 3 |
| Զ. „ | 17, 20 | 4, 30 | | 2, 15 |
| | 115, 20 | 28, 80 | | 14, 40 |

Գներու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Սեղանաւոր Տիար ՍԱՐԳԻՆ ԳԱՐԻԷԼԵԱՆ, միակ գիտաւոր գործակալ տոմս վիճակահանութեան. Վառնա, Մուսալա։

Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին։

Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէնն ալ վճարել։

---

Отговорникъ М. Сконовъ
Печантица Взаимность — "Варна."